

զլուսազարգ վանորայսն՝ սփռեալ էին ի գեղորայսն եւ անդեսայք եւ այգիք եւ բուրաստանք եւ հօտք խաչանց եւ արջառոց բազմութիւնս ստացեալ էին եւ եղեալ էին իբրեւ դժի ի մեծատանց աշխարհականաց» (296) :

Անհրաժեշտ տեսաւ Մովսէս այսպիսիններու դէմ պատերազմ մղել, թէ գայթակղութեան առիթը բառնալու եւ թէ տեղերը լաւագոյններուն յատկացնելու : Բայց պողպատեայ ոյժ պէտք էր առ այս : Ոչ միայն անոնք իրենց պաշտպանութեան համար թումբեր էին կանգնած, այլ եւ ունէին իրենց քաջալերիչ ժամանակակից կաթողիկոսները<sup>1</sup>, որոնք անկարգութեամբ իրենցմէ վար չէին մնար : Չգարհուրեցաւ սակայն Մովսէս, որ յեցած էր իր անբասիր վարքի եւ եկեղեցական կանոններու վրայ եւ ունէր իրեն թիկունք ժողովուրդը : Լսեցինք վերագոյն յիշատակազրի մը տողերը, թէ Մովսէս արդէն վարդապետ եղած ժամանակ<sup>2</sup> «բաբունական գաւազանաւ եւ բարձրագահ իշխանութեամբ տիրէ մերումս ժողովրդեան՝ ախոյեան յաղթաւզ ընդդէմ արիոսականացն եւ հերեսիտաց» : Այս իշխանութեամբ ահա այն բոլոր անկարգութիւնները, զորս յիշեցինք «մին մին

<sup>1</sup> «Շատք ոմանք ի կաթողիկոս Մեղքին (Մեղքիսեղեկ) ապաւինելով ոչ կամէին ելանել ի տեղւոջէ իւրեանց եւ ի կալուածոցն հրաժարել» . Դարանաղցի, էջ 297 :

<sup>2</sup> Հմմտ. «Տակաւին վարդապետ դուրով առնէր զայս» . Դարանաղցի, անդ :